

Վասնզի Աստուած այնպէս
սիրեց աշխարհը, մինչեւ իր
միածին Որդին տուաւ, որպէս
զի աւէն ով որ Անոր հաւա-
տայ՝ չկորսուի, հապա յաւի-
տենական կեանք ունենայ :
Յովթ. Գ. 16

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ձեզմէ ամէն մէկը նոյն միա-
քր թող ունենայ, որ Գրիստոս
Յիսուսի մէջ էր : Որ Աստուծոյ
կերպարանքը ունենալով . . .
ինքզինքը խոնարհեցուց, մին-
չեւ մահուան հնազանդ եղաւ,
այն ալ խաբին մահուանը :
Փիլ. Բ. 5-8

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան.—Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Պալքանեան երկիրներ 1 շիլ. ուրիշ երկիրներ 1,50 շիլ

Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

Թիի 5

Գ. ՏԱՐԻ

25 ՅՈՒՆԻՍ 1927

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱԶԻՆ ՓԱՅԼՈՒՆՈՒԹԵՆԷՆ

Քանզի խաբին քարոզութիւնը կորուսածներուն յիմարութիւն է, բայց
մեզի փրկուածներու Աստուծոյ զօրութիւնն է : (Ա. Կորն. Ա. 18):

Բաց դուռ մը կայ, որուն մէջէն
խաչին փայլունութիւնը
Մեզ ցոյց կուտայ ամէն ատեն
Փրկչին մեծ զթուլթիւնը :

Գողգոթայի խաչը մարդկութեան անծայր
բաներ ունի պատմելիք : Իւրաքանչիւր հոգիի
տարբեր մի բան, տարբեր շեշտով, տարբեր
յանկերգով : Դու ալ կը լսե՞ս այդ ձայնը, քաջա-
լերակա՞ն է այն քեզի համար, յանդիմանակա՞ն
է, ուրախութի՞ւն կը ներշնչէ, պաղատագի՞րն է :

Ա՛խ, վախճում թէ դու ալ շատերուն նման
սոյն փրկարար ձայնին չես անուար, ինչպէս
Հրէաները, որոնք նշան կը փնտռէին եւ Յոյնե-
րը, որոնք իմաստութիւն, որոնց այդ խաչին
քարոզութիւնը միայն գայթակղութիւն եւ յի-
մարութիւն էր : Թիւրեւս դու ալ կը հարցնես
ինքզինքիդ,

Յիսուս ինչո՞ւ համար այդ խաչէն կախուած
է, ինչո՞ւ այդ սարսուփելի չարչարանքն ու
տուայտանքը : Ի՞նչ ամայի վայր մըն է Գողգո-
թան, քստմանէի է գանկի տեղը, ուր թագաւոր
մը կախուած է չոր փայտին վրայ, լքուած իր
հետեւորդներէն, մերժուած իր հպատակներէն,
անարգուած հեթանոսներէն :

Ի՞նչ ամայի տեսարան :

Ամայի՛ բայց պերճախօս, վառագի,

Գողգոթայի այդ խաչին մէջ խորունկ դադա-
նիքներ պահուած են, որուն նայողը, որմէ եկած

ձայնին մտիկ ընողը, որմէ ճառագայթող լոյսէն
ողողուիլ ուզողը Աստուծու սքանչելի զօրու-
թեանց տեղեակ կը լինի :

Պատկեր մը կը գտնուի իմ առջեւ որ խաչ
մը կը ներկայացնէ, չոր փայտի պատկեր մը,
եւ սակայն անկէ լոյսի ճառագայթներ կը բաժ-
նուին, դէպի աջ ու ձախ, վեր եւ վար ու ամէն
կողմ : Սա կը յայտնէ մեզ թէ միայն այդ ճա-
ռագայթներով կրնանք տեսնել մարդկու-
թեան անցեալը, ներկան եւ ապա-
գան : Դէպի անցեալը ճառագայթողը՝ կը հաս-
ցնէ զմեզ մինչեւ բարձրագոյն Վէմը, Աստուծոյ
գահը : Իսկ դէպի ապագան ցայտողը կը լուսա-
ւորէ մեր տկար քայլերը, մութին մէջէն մինչեւ
նոր Երուսաղէմի դուռը, մինչեւ նոր յաւիտենա-
կանութեան սահմանները :

Այդ խաչին լուսարձակը դէպի անցեալը
ուղղելով մենք նոր լոյսով մը կը տես-
նենք զԱստուած :

Առանց այս խաչին լոյսին զԱստուած ճանչ-
նալ կարելի չէ (Յովհ. Ա. 18) : Առաջին բանը
որ կը տեսնենք Անոր վրայ, Աստուծոյ Սրբու-
թիւնն է :

Ա.— ԱՍՏՈՒԱԾ ՍՈՒՐԲ Է :

Սուրբ է, Սուրբ է, Սուրբ է Եհովան կ'եր-
գենք մեր եկեղեցիներուն մէջ : Եսայի տեսաւ
տաճարին մէջ որ Սերովբէներն ալ երեսներն,
ուսրերն ծածկած, թռչելով փոփոխակի կ'աղա-
ղակէին, Սուրբ է, Սուրբ է, Սուրբ է զօրաց

Տէրը, բոլոր երկիրը Անոր փառքով լեցուն է :

Եւայի այդ սրբութեան առջեւ ինքզինքը այնքան դատապարտուած գտաւ որ աղաղակեց, «վայ ինձի, ահա կը կորսուիմ, վասնզի ես պիղծ շրթունք ունեցող մարդ մըն եմ, պղծաշուք թն ժողովուրդի մէջ կը բնակիմ, եւ իմ աչքերս զօրաց Տէրը, թագաւորը տեսան» :

Եթէ Տէրը Աստուած է, թագաւոր է, կրնայ նաեւ օրէնքներ դնել, ով որ այդ օրէնքները ոտնակոխ ընէ, պէտք է դատապարտուի, բայց եթէ Ինքը կ'ուզէ այդ սճրագործին խնայել, պէտք է անոր տեղը ուրիշ մը դառնայ : Ինչ չափով որ փոխանորդը պատժուի, անով կը հաուկցուի դատաւորին սրբութիւնը եւ մեղքին ահաւորութիւնը :

Գողգոթան դատարանն է, ուր Աստուծոյ սրբութիւնը եւ մարդկութեան մեղքը իրարու կը հանդիպին : Հոն այդ բարձրութեան վրայ կը կուտակուին Աստուծոյ բարկութեան ու դատաստանի կարկառուն ու մութ ամպերը, ուրկէ փոթորիկը ծայր կուտայ եւ Անոր սրբութեան կայծակները վերջ ի վերջոյ կ'արձակուին ու կը շանթահարեն Յիսուսի Սուրբ մարմինը, որ աշխարհի մեղքին փոխանորդաբար, իբր զո՛հի զառնուկ խաչէն կախուած է :

Այո՛, Աստուծոյ համար կարելի էր մարդկութեան մեղքը մէկ խօսքով քաւել առանց իր միաձին Որդին դրկելու : Բայց գիտցիր թէ Աստուած ոչ միայն Ս էր է, այլ նաեւ Ս ու ըր ու Արդար է :

Եթէ Աստուծոյ սէրը պէտք է զոհացում գտնէ մեղաւորին փրկութիւնովը, պէտք է Անոր սրբութիւնն ու արդարութիւնը եւս զոհացում գտնեն, եթէ ոչ Աստուած անարդար կ'ըլլայ իր իսկ Սիրովը :

Աստուած մաս մը սէր չէ, մաս մը սուրբ եւ մաս մըն ալ արդար : Աստուած լման սէր է, լման սուրբ եւ լման արդար :

Անիկա վար չմնար այն Հոովմայեցի արդարակորով Սէնաթօրէն, որ իր երկու սիրական որդիները մահուան դատապարտեց, վասնզի իր դրած օրէնքները անոնց կողմէ ոտնակոխ եղած էին : Իբր հայր միայն սէր ունէր որդիներուն հանդէպ, սակայն իբր Սէնաթօր օրէնքը կը կատարէր :

Որպէսզի Աստուծոյ յաւիտենական արդարութիւնը չփրաւորուէր, եւ որպէսզի Աստուած արդար մնալով հանդերձ կարող ըլլար նաեւ մեղաւորին օգնել, ահա Որդին էր որ կայանցաւ Հօրը առջեւ ըսելով. «Հայր, Դու Սուրբ ես, Բու սրբութիւնդ, արդարութիւնդ չկրնար փրաւորուիլ, Բու սէրդ ալ պէտք է զոհացում գտնէ, ուստի ես կերթամ, Հայր, Զիս զրկէ, կ'երթամ սիրով զոհուելու, վասնզի սոյն սիրով ես ալ կը

սիրեմ մեղաւորն ու դատապարտեալը : Գիտեմ, Բու արդարութիւնդ Աստուածութեանս, «Է»ութեանս ունայնացումը կը պահանջէ եւ խոնարհութիւն մինչեւ խաչին մահուան, Հայր, այդ անարգ ճամբան կ'ընդգրկեմ, թող մարդկութիւնը ազատուի մեղքէն ու սատանային լուծէն» :

Խաչին լոյսովը կը տեսնենք,

Բ.— ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ.— Արդար սատանայի հանդէպ : Սատանան ամենաահարկու թշնամին է երկիրքի եւ մարդկութեան : Մարդիկ, մահաւանդ անապաշխարներ շատ թեթեւօրէն կը նային այդ հակառակորդ մոնչող առիւծին վրայ եւ երբեմն ալ խնդալով կը յիշեն անոր անունը, վասնզի նա իրենց համար երբեք վտանգաւոր չէ, իրենց հակառակորդը չէ, իրենց ժամանակաւոր բարեկամն է - կեղծը : Բայց հաւատացեալ մը գիտէ անոր սարսափելի զօրութիւնը, քանզի գիտէ թէ հրեշտակներ իսկ չեն կրնար անոր դէմ մարտնչել :

Աստուածաշունչը կը սորվեցնէ թէ անիկա աշխարհի աէրն է, այս ժամանակին իշխանը, ուստի մեր զործած իւրաքանչիւր մեղքը զմեզ աւելի գերի կ'ընէ անոր, իւրաքանչիւր սուտ, նոյնիսկ ամենապղտիկ պարագայական մի սուտ կը ցուցնէ թէ մենք անոր հպատակներն ենք դեռ : Այսպէս սատանան մեղքին իրաւունքը կը բռնեցնէ մեր վրայ, ու եթէ մեղքը շնորհուի մարդոց, պէտք է նախ սատանային անոնց վրայ ունեցած իրաւունքը առնուի :

Աշխարհի մեղքը վերցնող Աստուծոյ Գառնուկը, Հօրը պահանջած արդարութիւնը վճարեց, միեւնոյն ատեն սատանային իրաւունքները բռնազրաւեց, այս կերպով վճարուած պարտքը անգամ մըն ալ չկրնար ներկայացուիլ :

Եթէ Աստուած առանց խաչին ներելու ըլլար մարդկութեան, այն ատեն սատանան Աստուծոյ արդարութիւնը պիտի անարգէր, վասնզի Աստուած Ինք սատանային իրաւունքները ոտնակոխելով անարդար եղած պիտի ըլլար : Հեզ Գառնուկը քաւեց խաչին ճամբան եւ Աստուծոյ բացարձակ արդարութիւնը ի դուրձ դրաւ :

Որդին խաչը ելած է, մեղաւորը ազատուած է, սատանային պահանջները չեղեալ համարուած են : Աստուծոյ արդարութիւնը կատարուած է.— Ա.մէն բան կատարուած է : Օրհնեալ ըլլայ այս մեծ փրկագործութեան Տէրը, մեղաւորը ուրախ է, անոր աչքը խաչին լսած է :

Գողգոթայի խաչին լոյսովը կը տեսնենք թէ, Գ.— ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է.— Աստուած մեղաւորը կը սիրէ, սիրոյ առարկան մեղաւոր աշխարհն է : Առանց խաչի կարելի չէ Աստուծոյ սիրոյն հաւատալ : Ան որ առանց խաչի Աստուծոյ սիրոյն կը հաւատայ, յանդուգն լիմար մըն է : Այդ-

պիտիին հաւատքը ի՞նչ բանի վրայ կը յենու : Հաւատքին միակ պատճառն ու հիմը Գողգոթայի Զոհն է : Իրաւ, արարչագործութենէ մինչեւ Գողգոթայի Աստուծոյ սէրը յայտնի կ'ընէ, սակայն Գողգոթայի սիրոյն չկրնալ հաւատացողը, միւսին բնա՛ւ չկրնար հաւատալ :

Մի՛ կարդար միայն Փիլիպ. Բ. 5-8 համարները, հապա միացուր զայն Յովհ. Գ. 16 ի հետ ու պիտի տեսնես չօրը սէրը :

Որքան դժուար էր Իսահակի համար ստեքն ու ձեռքերը կապել տալով փայտակոյտին վրայ պառկել, հնազանդ ու պատրաստ, վիզը երկարելով դանակին, նոյնքան եւ թերեւս աւելի դժուար էր Աբրահամի համար, իր մէկ հատիկ սրդիին ձեռքերն ու ստեքերը կապել, ու դանակն առնելով զանիկա մտրթել :

Այսպէս ալ Որդիին համար որքան դժուար էր Իր անձը սննդանցնել եւ ծառայի կերպարանք առնելը, նոյնքան դժուար էր չօրը համար զնել Իր Միածինը այդ վիճակին մէջ : Բայց Անիկա այդ մեծ գործն ըրաւ քու սիրտդ համար, իմ սիրոյս համար : Ա՛խ, ի՛նչ գիտութեան ճութութիւն է այս, ի՛նչ մեծ զազանիք անքննելի, զոր ամէն օր սորվելու ենք, ու պիտի սորվինք յաւիտեանս : Խաչն է որ ծայր մը գտած է, որով հետզհետէ կրնանք հասկնալ Աստուծոյ սիրոյն լեցունութեան մեծ զազանիքը. կը հաւատա՞ս խաչին ոյժին, այն ատեն զու ալ բացազանչէ.—

Աստուած միշտ սէր է,

նա զիս կը սիրէ :

Դ.— ԳՈՂԳՈԹԱՅԻ ԽԱՉԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՍԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՏԱՏԵ ԶԱՆԴԷՊ ԻՐ ԽՈՍՏՄՈՒՆԻՔԻՆ. Աստուած հաւատարիմ է ու Իր խոստումը կը պահէ : Մարդկային պատմութեան ս'իզդըր Անիկա օձը յանդիմանելով՝ անուղղակի խոստացաւ Իր տոջեւը կայնող Եւային թէ անոր սերունդէն եղողը օձին զլուխը պիտի ջախջախէր : Դարերու շրջանը անցաւ եւ Տէրը յիշեց Իր խոստումը եւ յարմար ժամանակին զրկեց Իր Որդին : Հին Կտակարանի այդ խոստումէն սկսեալ մինչեւ Գողգոթայի խոստումներու սքանչելի ոսկեղէն շղթայ մը կ'երկարի : Աստուած Իր խօսքը կը պահէ : Օձին զլուխը ջախջախուած է : Աշխարհի մեղքը կրող Գառնուկը կ'արիւնի : Ահա՛, սոյն խոստումները խաչով-Խաչեալով մեզի համար «Այո եւ ամէն» եղան :

Աստուած հաւատարիմ է, բայց առանց խաչի չպիտի կրնայինք հասկնալ զայս :

Խաչի լուսարձակով հասկցանք Աստուծոյ էութիւնը եւ նկարագիրը, սակայն նոյնով տեսանք նաեւ Անոր սիրտը :

Աստուծոյ վեհութիւնը արարչագործութեան եւ Իր գործերուն մէջ կը տեսնենք, բայց խաչին

վրայ միայն կրնանք Իր սրտի իսկական պատկերը տեսնել :

Օ՛ն, ուրեմն զէպի Գողգոթայ, Խաչէն արձակուած լոյսը քեզ պիտի ցուցնէ թէ Աստուած քու հայրդ է : Գնա՛ հոն, մօտեցի՛ր անոր ու վստահութեամբ եւ համարձակ գոչէ,

«Աբբա հայր» :

(Շար.)

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՅԱՂԹԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ

— 00 —

Բայց գոյութիւն Աստուծոյ որ մեզի յաղթութիւն կ'ուտայ մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքով :
Ա. Կորնթ. 15. 57

Երբ ձեզ կը մոռնան ու զանց կ'ընեն, դիտմամբ կ'անտեսեն, եւ դուք այս անարգանքներուն վրայ ներքնապէս ուրախ կ'զգաք եւ կը փառաւորուիք, որովհետեւ յարմար սեպուած էք Քրիստոսի համար տառապել՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ ձեր բարի գործերուն վրայ գէշ կը խօսուի, ձեր փափաքները կը մերժուին, ձեր կարծիքները կը ժխտուին ու զազափարները կը ծաղրուին, ու դուք այս բոլոր բաները սիրով, լռութեամբ եւ համբերութեամբ կ'ընդունիք՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ կը գոհանաք պարզ սնունդով ու հագուստով, սիրով կը դիմանաք ձեր չակնկալած ցուրտ միջավայրին կամ ընկերային շրջանակին, կը հաճիք Աստուծոյ արտօնուած առանձնութեան կամ այցելութեանց՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ կրնաք համբերութեամբ եւ հեղութեամբ կրել ձեզի հանդիպած ունէ անկարգութիւն, անճշդապահութիւն, անկանոնութիւն կամ հակառակութիւն՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ հաճոյք չէք զգար որ ձեր վրայ խօսին, ու ձեր բարի գործերը պատմեն ընկերային շրջանակներու մէջ, կամ չէք ակնկալեր որ ձեր վրայ հիանան, մէկ խօսքով, երբ կը յօժարիք շարքերու մէջ յետինն ըլլալ՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ կրնաք դիմագրաւել զեխտութեան, յիմարութեան, շտայլութեան, նոյնպէս հոգեւոր անմատութեան, եւ այս բոլոր բաները կրնաք կրել Քրիստոսի նման՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Երբ Պօղոսի նման ձեր բոլոր Յիսուսի վրայ զննով կը տեսնէք թէ անոնք միջոցներ են,

որոնցմով կրնաք Անոր անսահման շնորհքը հասկնալ, Անոր գերազանց գիտութիւնը ճանշնալ, եւ բոլորանուէր սրտի մը խորին համոզումով ըսել. — «Իմ տկարութիւններու վրայ պիտի պարծենամ», կամ «Անոր համար հաւնեի եմ եւ տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու եւ նեղութիւններու Քրիստոսի համար»:

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Նաեւ սիրել այն շնորհքը, որ կը սորվեցնէ ըսել, «Գիտեմ չքաւորութիւն եւ նեղութիւն քաշելը ու շատը ունենալը»: Երբոր Քրիստոսով կեանքն ու մահը ձեզի հաւասար են եւ թէ Անոր կամքը կատարելու համար դուք կ'ուզէք ի՞նչ որ Ան կամի՝

ՀՈ՛Ն Է ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Ինչու որ Անով կրնանք ըսել. —

«Քրիստոս իմ մարմինն է մէջ պիտի փառաւորուի, թէ՛ ապրելովս, թէ՛ մեռնելովս»: (Փիլ. Ա. 20 : Ա. Կորնթ. ԺԵ. 57):

Կ ա տ ա ր ե ա լ յ ա ղ թ ու թ իւ ն ը ձեր Յիսուս Քրիստոսը հազնին է, (Հովմ. ԺԳ. 14):

Ամէն բաներու մէջ ա՛լ աւելի յաղթող կ'ըլլանք Անով, որ մեզ սիրեց : (Հովմ. Ը. 37):

Բայց գոհութիւն Աստուծոյ որ միշտ յաղթող կ'ըլլէ մեզ Քրիստոսով, ու զինք ճանչնալու հոտը մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ : (Բ. Կորնթ. Բ. 14):

Ձ. Բ. Պ.

Գ Ա Ն Ա Մ Օ Ր Ի

(Շար. Ա. Թիւն)

ԳՂՈՒՆ Բ.

40 ընկերներս ալ յաղթեցին «Բէօթօ»ի մէջ : Ժողէֆ Նիսիմա անունով մէկէ մը հիմնուած 1875ին քրիստոնէական գոլէճի մը մէջ սրպէս օտարականներ ընդունուեցանք : Այս առաջին քրիստոնէական գոլէճն էր : Մեզմէ միայն 15 հոգի կրցին գոլէճին ընթացքը կատարել, որոնցմէ մին ալ ես էի : Մեր ընթացքը աւարտելէն ետքը Ճաբոնի ամէն կողմերը քարոզելու գացինք : Ես հաստատ գիտեմ թէ այս քարոզչներուն միջոցաւ Ճաբոնի եկեղեցիներուն մէկ թիւը հիմնուեցաւ : «Բէօթէյն Ճէյնս»ի տղաքը ճշմարիտ աւետարանիչներ էին :

Բանի մը տարի ետքը «Տօշիշա»ի գոլէճին մէջ որպէս նախագահին օգնական ուսուցիչ կանչուեցայ եւ հոն պաշտօն վարեցի շատ մը տարիներ : Իմ հոն աստուածաբանութեան փրօֆէսոր եղած միջոցիս էր որ առաջին անգամ յարաբերութեան մէջ մտայ, «Նոր աստուածաբանութեան» եւ «Բարձր քրիստոնէութեան» հետ : Ես նախ հոն գտայ սուր հետաքրքրութիւն մը :

Ես դարձի եկած, կերտուած էի ամենէն խիստ մաքրակրօնութեան վարդապետութեան եւ գործնական կը նին մէջ, սակայն առաջին ակնարկով, անոնց Սբ. զրոց պարունակութիւնը զրաքնելու անկախ ու վայելուչ եղանակը ինծի շատ բանաւոր թուեցաւ : Ես անոնցմէ այնքան հաճոյք զգացի՝ որ ինքզինքս թող տուի կատարելապէս տարուիլ անոնց խորամանկ պատճառաբանութիւններով, եւ վերջապէս Արդիակալութեան դարձայ եւ բարձրագոյն քրիստոնէութեան տեսակէտները սրբեզրեցի, զանոնք տարածեցի եւ քարոզեցի, ու կարգ մը արդիականութեան գրքեր ալ ճաբոնեցի թարգմանեցի : Ճաբոնի եկեղեցիներուն մէջ Արդիականութիւնը մտցնողներուն առաջինն էի. անոնք հոն ի՞նչ տաքնապնեռ տեղի տուին եւ կուտան տակաւին : Այս թոյնը իմ հայրենի եկեղեցիներու մէջ ներարկած ըլլալու պատառխատուութեան ամբողջ ծանրութեանը իմ վրաս ճնշելը կ'զգամ : Այն ատենուան Ճաբոնի քաղաքին բոլոր եկեղեցիներն ալ ուղղափառ էին : Միայն մէկ միաբանութեան եւ մէկ բանապաշտ եկեղեցի կար : Բարեկամներս գիտ վնասակար մէկը կը ճանչնային, որպէս զայլ գտնեցու մէջ : Իմ ներկայ դաւանանքս անոնցինէն տարբեր էր, եւ իմ Սբ. գիրք քննելու մեթոտս անոնցինին հակառակ էր : Ես պէտք է ձգեմ այս եկեղեցին ու ձեզմէ բաժնուիմ : Թէ ի՞նչ է աշխարհիկ իմաստութեան սուած խելացի խրատը. «Բու նոր հայեցակէտներուը համար եկեղեցին ձգելու պէտք չկայ. դուն քու ներկայ դաւանանքդ պահէ քու աշխատանքի սենեակիդ մէջ, բայց առերեսութս կեցիր մեր եկեղեցին մէջ» : Ես ըսի. «Չեմ կրնար խօսիլ ինչ որ չեմ ընդունիր, ես կը խօսիմ ինչի որ կը հաւատամ. չեմ կրնար ստել եւ ոչ ալ խաբել» :

Եկեղեցին ձգելով ամէն բան ձգեցի : Ինչո՞ւ արդիական տարագով արդիականութիւնը չքարոզէի, քանի որ արդիականութիւնն ու բարձր քրիստոնէութիւնը ընդունելով՝ ես կորսնցուցած էի իմ քրիստոնէական պատգամս եւ քանդած էի Աստուածաշունչին ապտուածային հեղինակութեան վրայ ունեցած հաւատքս : Սբ. զրոց ընթերցումովը դարձի եկած էի եւ զայն կը սիրէի, կը սիրէի՝ որովհետեւ զայն կը նկատէի իբր իմ երկնաւոր Հօրս անսխալ Խօսքը, Բանը, կը հաւատայի անոր բացարձակ ու միակ ճշմարտութեանը, բայց նոր դաւանանքս ականջիս կը փսփսար. «Ո՛չ, քու Սբ. գիրքդ Աստուծոյ անսխալ զրեքը չէ. հոն սխալներով, դիցաբանութիւններով, նախապաշարումներով, առասպելներով ու հէքիսթներով լի է» : Ուրեմն ես այսպիսի գիրք մը ի՞նչպէս կրնամ քարոզել : Արդիականութիւնն ու բարձր քրիստոնէութիւնը չեն հաւատար Քրիստոսի կատարեալ Աստու-

ծովթեան. Ան Սը. Հոգիէն ծնած չէ, այլ հասարակ մարդ է: Կ'ընդունին թէ Նա մեռած ու թաղուած է, բայց յարութիւն առած չէ: Հոն գերբնական ծնունդի ու յարութեան անկարելիութիւնը կայ: Այսպէս Յիսուսի ճշմարիտ Աստուածութեան հաւատքս կորսնցնելով, կորսնցուցի նաեւ իմ անձնական Փրկիչն, ու զԱյն կորսնցնելով՝ ամէն բան կորսնցուցի: Այլեւս չէի կրնար «Նաչին վրայ թափուած Յիսուս Քրիստոսի արեամբ փրկութիւնը քարոզել». ուստի պէտք էր բաժնուէի եկեղեցիէն:

Զատուելով եկեղեցիէն 20 երկար տարիներ կառավարութեան որպէս պաշտօնեայ գործեցի: Հազարաւորներէ աւելի բեմախօս ճանչցուած եմ քան Աւետարանի քարոզիչ: Ահա՛, բարեկամներս, իմ կեանքիս ամենալաւ տարիները ինչպէս վատնած ու մոխած եմ: Այս քսան տարիները՝ քրիստոնէական կեանքիս նաւաբեկութեան շրջանն եղած է, արդիականութեան եւ բարձր քննադատութեան ժայռին վրայ:

Ուխտած էի Յիսուս Քրիստոսի Աւետարանը կայսրութեանս ամէն կողմը տարածելու, բայց ուխտագրանց եղայ: Ահա սատարնային խորամանկ նենգութիւնը: Սուր հալածանքներն ու տանջանքները զիս չկրցին մոլորեցնել, բայց արդիականութիւնն ու բարձր քննադատութիւնը որպէս մասնացու գէնքեր սատարնային ձեռքը մէջ զիս վերաւորեցին ու մոլորեցուցին զիս իմ հաւատքէս եւ եղայ ես իմ երկնաւոր Հօրս անառակ որդին: Քսան տարի հեռու ապրեցայ, հոս ու հոն թափառելով մոռցայ իմ Հայրս, իմ Սը. գիրքս եւ իմ կրօնական օճախս: Բայց իմ Հայրս զիս չմոռցաւ, հսկեց վրաս եւ յարմար առիթով զիս Իրեն քաշեց:

(Շար.)

Վ. Ս.

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԸ

Նշանաւոր բնախոյզը Քարլ Ֆօն Լինէ, (ծնած 23 Մայիս 1707. մեռած 10 Յունիւ. 1778. իբր փրօֆէսոր Ուբսալայի մէջ) ոչ միայն մեծ իմաստասէր մըն էր, հապա այն իմաստուններէն մէկը, որ ինքզինքը կը խոնարհեցնէր աստուածային իմաստութեան առջեւ: Ան թէ՛ Սուրբ Գրքին բարեկամ էր եւ թէ՛ ծաղիկներու: Իր մանկութիւնէն այս կրկնակի սէրը շատ սրուշ կերպով յայտնի եղաւ:

Օր մը մայրը նշմարեց որ տղան իր Սուրբ Գիրքը կը գործածէր անոր մէջ ծաղիկներ չորցնելու, ուստի մեղմիւ յանդիմանեց զայն ըսելով. «Սիրելի զաւակ, դուն քու ծաղիկներդ իմ Սուրբ Գրքին մէջ դնելու չես», Սը. Գիրքը ասանկ ազատուելով մեղք է»:

Պատկեր ըսաւ. «Ներէ ինձ սիրելի մայր, բայց այս ծաղիկները այնքան գեղեցիկ են որ ես երբեք տեսած եմ: Ես խորհեցայ զանոնք ամենալաւ կերպով պահել, որովհետեւ յաճախ քեզմէ եւ հայրիկէն լսած եմ որ Սը. Գիրքը կեանք տրուող գիրք մըն է. խորհեցայ որ եթէ ես անոր թերթերուն մէջ դնեմ այս ծաղիկները, իրենց փառաւոր գոյները պիտի չկորսնցնեն. Սը. Գիրքը զանոնք միշտ թարմ եւ կենդանի պիտի պահէ»:

«Սիրելի զաւակ», ըսաւ մայրը, «Երբ մենք Սուրբ Գիրքը կենսատու գիրք կը կոչենք, բնական կեանքը չէ որ կը պեմենք, այլ հոգեւոր կեանքը: Իւրաքանչիւր խորհուրդ սր մեր մըտքէն կ'անցնի, բոյս մըն է որ մեր հոգիներու պարտէզին մէջ կ'աճի: Ինչպէս երկրի վրայ՝ հոն ալ շատ մը բոյսեր կ'աճին, ոմանք զարմանալի գեղեցիկ եւ հրապուրիչ, ուրիշներ սղեղ ու անհաճոյ՝ մեղքի բիծերով ապականած: Ամէն անգամ որ Սուրբ Գիրքը կ'ստրած որտով եւ աղօթքով կը կարդանք, սերմի հատիկ մը կը սերմանուի մեր սրտերուն մէջ եւ ժամանակի ընթացքին գեղեցիկ ծաղիկներ կը բանայ ու բարի պտուղներ կուտայ»: «Բայց ես կը վախանամ» շարունակեց մայրը, «Թէ դուն այս երկրիս վրայն ծաղիկները շատ աւելի կը սիրես. քան այն ծաղիկները, որոնք Գեթսեմանիի կաթիլներովը կը թրջուին»:

«Ո՛հ, ո՛չ մայրիկ, ես երբեք իմ Սուրբ Գիրքս պիտի չմոռնամ», ըսաւ տղան. բայց ամէն անգամ երբ ծաղիկ մը տեսնեմ, ինքնիրենս կը մտածեմ թէ՛ ինչո՞ւ համար Աստուած այս ցուրտ ու խոնաւ երկրին մէջ ասանկ հրաշալի գոյներով ծաղիկներ յառաջ բերած է, արդեօք մեզ երջանկացնելու համար չէ՞: Եւ ինձի անանկ կ'երեւի, իբր թէ ծաղիկները իրենց քաղցր շրթերով ծաղկելով կը պատասխանեն. «Մեզի նայէ եւ գիտցիր թէ Աստուած որչա՞փ բարի է»: Օ՛հ մայր, իւրաքանչիւր ծաղիկ Աստուծոյ մէկ խորհուրդը պէտք է եղած ըլլայ»:

Մայրը զարմացած պատասխանեց. «Այո՛ զաւակ, ըսածդ ճիշդ է. դուն ալ պէտք է այնպէս ըլլաս, ինչպէս որ են ասանկ բարի Աստուծոյ մը բոլոր զաւակները»:

Քարլ Ֆօն Լինէ իր խոստումը կատարեց. իր կեանքի բոլոր քայլերուն մէջ ճանչցաւ զԱստուած, փառաւորեց զԱյն եւ ամէն բանէն աւելի յարգեց Սուրբ Գիրքը:

Կը պատմուի թէ Անգլիոյ մէջ երբ ան ծաղկազարդ զմրխտանման դաշտերը օնմոհէր, ծունկի կուգար եւ ուրախութեան արցունքներով փառք կուտար Աստուծոյ, Որ ասանկ հրաշալի եւ գեղեցիկ բաներ ստեղծած է:

Թրգմ. Ե. ՏէՄԻՐՃԵԱՆ

ԹՈՒՐԳԵՐԷՆ ՄԱՍ

«ՐԱՊՊԸՄ ՎԷ ԱԼԼԱՆԸՄ»

(Յովհ. 20. 28)

(Վեր.) Ե. Ս. ԲԱՍՈՒՆԻ

Թողմասը պու իզրարա սէվզ էտէն հալ ու քէյֆիէթլէրի թէֆէրրիւաթլէ միւթալաւա էթմէյէ լուզում եօզ տըր : Պու միւնասէպէթլէ տահա զիյատէ իզրարըն մանա վէ էնէմիյէթինէ տաիր պիր դաշ սէօզ սէօյլէմէք արզուսընտաիր : Յիսուսա «Րապըմ վէ Ալլահըմ» տէմէսէք նէ՞ օլուր : Յիսուսա Ի պն ուլլահ իսմինի վէրմէսէք նէ՞ օլուր : Յիսուսա՝ Ալլահ եախօտ Իպնուլլահ տէմէք Ալլահըն վահտանիյէթի թալիմինէ գարշը տէյիլ մի : Իշթէ իպթիտատէն պէրիւ ֆիքրլէրի չօզ մէշղուէ էթմիշ սուալլար :

Իլք եէրտէ շուշը տէյէլիմ քի Յիսուս քէնտիսի Ալլահըն պիրլիյինի էն զուվվէթլի սուրէթտէ թէքիտ վէ թէշաիտ էթմիշ տիր : Թողմաս վէ տիկէր շահիրտլէր, Պօղոս վէ հէփ րէսուլլէր՝ եէհուտի հալինաէ, Ալլահըն պիրլիյինի զայէթ սըզը սուրէթտէ հըֆզ էաէն քիմսէլէր իտիլէր : Շու հալտէ, էմին օլալլամ քի, Յիսուսա Իպնուլլահ իսմինի վէրմէք, հաթթա «Րապըմ վէ Ալլահըմ» տէյէրէք հուզուրընտա սէճտէ զըմազ էկէր Ալլահըն պիրլիյինի գարշը օլաւ իտի, նէ՞ Յիսուս քէնտիսի պճնա միւնասատէ էտէնէք իտի, նէ՞ տէ շահիրտլէր վէ րէսուլլար պուշա րազի օլաճազ իտիլէր : Փաղաթ Ալլահըն պիրլիյի թալիմինի էօյլէ տար վէ գուրու սուրէթտէ իսթիմալ էթմէլի տէյիլիզ քի Յիսուսըն Իպնուլլահ օլմասըն, Ուլուհիյէթինի հիշէ չըգարալլամ եա մանասընտան սօյալլամ, իլլա Ալլահըն պիրլիյինի էօյլէ տիրի վէ կէնիշ թութմալըլըզ քի Յիսուս Բրիստոսըն Ուլուհիյէթի տէ անըն իշինէ սըղապիլէ : Պու կիւնքի միւթալաւալըն պուշա պիրազ եարտըմ էթմէսինի Ալլահտան նիյազ էտէրիզ :

Շահիրտլէր զաթէն Յիսուսա Րապըմ իւնվանըն վէրմէյէ ալըշմըշլար իտի, իմտի թողմասըն «Րապըմ» խիթապընա պուրատա պիր տէ «Ալլահըմ» խիթապընը իւալէ էթմէսինտէ՝ մութազա խուսուսի պիր մանա վէ մազսէտ վար տըր : Վէ Յիսուս՝ պու խիթապը պիւա իթիրազ գապուլ էթտիյի շէօյլէ սուրսըն, պուշտան տուլլը պիր պէրէքէթ տէ օգույօր : Թէքրար, աչըզ տըր քի Յովհաննէս ինճիլինին ասըլ խաթէմէթի՝ պապ 20, 30, 31 տիր, Չիհնճի պապ պիր գէյլ եախօտ իւալէ տիր : Պու խաթէմէտէ՝ մու-

հարրիր քէնտի ինճիլինի նէ մազսէտ իլէ եազտըղընը իզահ էաիյօր : Օգուլալալաւա ի քի շէյին հուսուլը միւրատ օլուշմըշ տըր. (ա). Ինան մազ եախօտ ի ման էթմէք. (բ). Հայաթա մալիք օլմազ : Փաղաթ պու իքի շէյլէր եէքտիկէրինտէն ալըլ վէ տալմալը տէյիլ տիրլէր. պիւաքս իքինճիսի ասըլ զայէ վէ պիրինճիսի անա եէթիշմէք իշին շարթ արր. իքի զըսմար պիր թէք թէմամիյէթ թէշօրիլ էտէր : Հայաթա մալիք օլմազ իշին՝ Յիսուսա իման էթմէք շարթը էվվէլ տիր, չիւնքի հայաթա մալիք օլմազ՝ անճազ Անըն ի միյլէ միւթքին տիր : Լաքին Յիսուսա նէ՞ սըֆէթլէրլէ իման էտիլէնէք : Իքի սըֆէթլէրլէ. (ա). Քրիստոս տէյիլ, (բ). Իպնուլլահ տէյիլ : Պու իքիւնային շէյ տէյիլ տիր : Պիրինճիսի կլօթլէրիք քի Յիսուս Իսրայէլէ վատ օլուշան նէլաւաք եա տըր. Յիսուսըն գլմինի էօմիլ՝ Ահալ Սթիլգալէքի մէսիհանի վատալըն իթմամը տըր : Պու վատալա կէօրէ՝ խէլաւքալա եախօտ Մէսիհ «ճէսէտ ճիհէթիյէ Դալիթ նէյիլինտէն» կէլէնէք իտի (պազ Րօմ. 1. 3 : 2 Տիմ. 2. 8), վէ կէլալ : Պաշա պիրինէ պէքլէմէյէ արթըզ հաճէթ եօզ տըր : Քրիստոս իւնվանը՝ Յիսուստա օլան ինան իյէթ ունսուրըն տահա զիյատէ թէքիտ էտէր : Յիսուս թէքմիլ ինան տըր, ինսանիյէթին էքմէլ վէ պիէմալ նուսուշի տիր : Պէշէրիյէթին եէթիշէպիլէնէյի սօն զայէ տիր : Անըն կիպի հէր թարաֆլը պիր ինսան տահա եաշալմամըշ տըր : Պու սէպլպուշն Յիսուս քէնտիսինի Իպնուլլահն թէմիյէ էտէր իտի : Իքինճիսի, եանի Յիսուսըն Իպնուլլահ օլմասը (պազ Րօմ. 1. 3), Անըն իւահիւսընը եախօտ Ուլուհիյէթինի թէքիտ էտէր, տէմէք տիր քի Օ՝ թէքմիլ ինսան օլմապլէ պէրապէր թէքմիլ Ալլահ տարալի, «Թէնտէ գահիր օլան Ալլահ». (1. Տիմ. 3. 16) : Շէօյլէնէ, հայաթա մալիք օլմազ իշին՝ Յիսուստա պու իքի թապիաթլարըն պիրլէշմիշ իտիյինէ իման էթմէք շարթ օլալըղընը էօյրէնիյօրըզ : Մուհարրիր՝ պիւթիւն ինճիլինի եազմասընտա քէնտիսին մազսէտի պու խիլինի աչըզ սէօյլէյօր, տտէմէրէ ինսանըմազ քի Յիսուս տէնիլէն Չաթտա՝ Իւահի վէ ինսանի թապիաթլար սըրմնի սուրէթտէ պիրլէշմիշ օլարազ տիւնեայա գահիր օլմուշ տըր, վէ խէլաւ վէ հայաթը կպէտիյէ պու աճալիպ իզհարը իման իլէ գապուլ էթմէքլէքտէ տիր : Շուրասընը աչըզ սէօյլէյէլիմ քի, ի ման էթմէք թապիլի՝ Ահալ ճէտիտին ճիւմէ միւթլիլիլէրի իշին օլալըղ կիպի՝

մուհարրիր ի Ինճիլ Յովհաննէս ի չիւն տախի, ստտէճէ ազլէն ինանմագ եախօտ գանմագ տէյիլ, իլլա Քրիստոս վէ Իպնուլլահ տէյիլ ինանտըղը Զաթա թէսլի մ' օլմագ, ի թաաթ էթմէք վէ Անըն իլէ պիւրէշէրէք հայաթ օրթագըղընա կիրմէք տիր: Մուհարրիր ի Ինճիլ աշղճա տէմէք իսթիյօր քի՝ Ալլահը պաշգա եկրտէ արամայընըզ, եալընըզ Յիսուստա պուլապիլիւրիւրիզ, վէ Ալլահըն հայաթ օլան էպէտի հայաթա մալիք օլմագ իսթիյօրսանըզ, իլահի վէ ինսանի թապիաթլարըն պիւրէշմէսի օլան Յիսուս Քրիստոսա կէլմէլի, Անը հայաթ մէն պալ հալիստէ տէրունիւրիզէ գապուլ էթմէլի վէ Անտէ եաշամալըսընըզ: Պու տէտիյիմիզի իսպաթ էթմէք կիւճ տէյիլ տիր: Էլպէթտէ գապուլ էտէրսիւրիզ քի հէր հանկը պիր քիթապըն իսպթէմէսի իլէ մուգատտէմէսի աշի մագ սէտի թագըզ վէ թէքիտ էալէր: Իմտի պու Ինճիլին մուգատտէմէսի տէճնէլիմ, օրատա նէ՝ կէօրիւրիւզ: Պապ 1. 14տէ Յիսուս հագընտա իքի խուսուսըն իտտիա էտիլտիյիւրի կէօրիւրիւզըզ. (ա). Օ՝ «Փէտէրին Իպն ի վահիտի» տիր: (բ). Քէլամ՝ անտէ թէն ալմըշ վէ տիւն-եատա եաշամըշ տըր. վէ աշղճ տըր քի Քէլամ վէ Իպն ի վահիտ՝ աշի վարըղը կէօսթէրիւր, իքի Փարպըլը նօզթա ի նագարլարտան: Քէլամ հագընտա աշի պապըն իպթիտաընտա (այէթ 1-4) պէյան էտիլիյօր քի, (ա). «Իպթիտատէ» եանի էզէլիյէթ տէն իտի: (բ). Ալլահըն նէզտիւն տէ իտի. (գ). Ալլահ իտի. (դ). Ալէմին խըլգաթընտա հիսսէտար իտի. (ե). Հայէթ անտէ իտի: «Իպն ի վահիտ» թապիւրի իսէ (պագ այէթ 18. պապ 3. 16, 18: 1. Յովհ. 4. 9)՝ Յիսուսա վէրիլէն Իպնուլլա իւնվանընըն՝ նիսպի օլմայըզ, մութլագ մանատա գուլլանըլտըղընը կէօսթէրիւր. եանի Քէնտիսի նէ մանատա Ալլահըն օղու իսէ, օ մանատա Ալլահըն պաշգա օղուլլարը եօզ տըր. Յիսուս Քրիստոս՝ սօնրատան Իպնուլլահ օլմատը, եախօտ Իպնուլլահ իսմի Անա անճագ պիր շէրէֆ իւնվանը հալիստէ վէրիլմէտի, իլլա Օ՝ տօղուշ հագըլ հալիստէ Իպնուլլահ տըր, մախուզ տէյիլ, էզէլի Օղուլ տըր: Մուհարրիր ի Ինճիլ աշի մուգատտէմէսի (այէթ 12, 13), պիւթիւն Ինճիլինին մագսէտիւրի շու տուրէթլէ տէ պէյան էտիյօր. եանի հէր քիմ Յիսուսը պէօյլէ՝ թէճէսսիւտ էթմիշ Քէլամ վէ Իպնուլլահ տէյիլ գապուլ էթմի վէ Անըն պու իսմինէ ի ման էթտի իսէ, անլէրէ տախի «էվլատ Ուլլահ օլմագըղա սէլահիյէթ վէրտի»: Ինսանլար, միւմիւնլէր հալիստէ, էվլատ

Ուլլահ օլուրլար, եանի ասընտան տէյիլ, սօնրատան. Յիսուս իսէ ասընտան Իպնուլլահ տըր: Պու էսասի Փարպը՝ պիւթիւն Անտը ճէտիտտէ հէր եէրտէ գուլվէթլէ թէքիտ էտիլմիշ պուլուրըզ: Վէ պա՛գ, ատէմին էվլատ Ուլլահ հալիստէ կէլմէսի ամէլիյաթընա, քի պիր գաշ ատըմլարտան իպարէթ տիր: Իլք ատըմ Քրիստոսա Իպնուլլահ տէյիլ իման էթմէք տիր, իմանըն պալատէ իգահ էտիլէն տօղուս մանասընտա: Ատէմլէր իման էտիպ Իպնուլլահը գալպլէրինէ գապուլ էթտիքլէրի կիպի՝ անլէրէ պիր սէլահիյէթ վէրիլիյօր: Պու սէլահիյէթ էվլատ էվլատ Ուլլահ թէսմիյէ օլունմագա, պու եիւքսէք իսմի թաշըմագա տըր (1 Յովհ. 3. 4):

Պունա Պօղոս րէսուլ «էվլատըղա գապուլ օլունմագ» (սրգեգրութիւն) նամընը վէրիւր (Բօմ. 8. 15-17: Գաղ. 4. 5, 6: Եփ. 1. 5): Պէօյլէճէ Ալլահըն Փարիլեասընա գապուլ օլունըրըզ (Եփ. 2. 19). արթըզ տիւնեա միւվաճէհէսիստէ էվլատ Ուլլահ իսմինի թաշըմագ շէրէֆ վէ իսթիյաղընա մալիքիզ: Ֆագաթ սալթ պու իսթիյաղ քիֆայէթ էթմէզ, սալթ իսմ ու շէրէֆ քեաֆի տէյիլ տիր: Էվլատ Ուլլահ թէսմիյէ օլունմագ կիւզէլ իսէտէ, Ֆիլվաղը էօյլէտէ օլմալը իզ, եանի «թապիաթը Իլահիյէյէ հիսսէտար» օլմամըզ լագըմ տըր (2 Պետ. 1. 4): Իմտի աշի վագթտա միւմիւնլէրէ սէլահիյէթ եախօտ գուտրէթ վէրիլիյօր էվլատ Ուլլահ օլմագըղա տախի. պու իսէ անճագ տօղուշ իլէ օլապիլիւր: Պու սէպէպտէն միւմին «եէնիտէն տօղար» (Յովհ. 3. 3, 7: 1 Պետ. 2. 2) րուհանի պիր տօղուշ իլէ: Պու տօղուշ «Ալլահ տան տօղմուշ» օլմագ տըր (Յովհ. 1. 12): Անըն վասըթասը Ինճիլ եախօտ Ալլահըն քէլամը տըր (Յակ. 1. 18: 1 Պետ. 1. 23), չիւնքի «իման՝ իշիթմէքտէն, վէ իշիթմէք Քրիստոսըն քէլամը վասըթասըլէ օլուր» (Բօմ. 10. 17): Պու տօղուշ՝ միւմին ճանըն թէճէսսիւտ էթմիշ քէլամա, եանի Ալլահ վէ ինսան թապիաթլարընա պիրիքտէ մալիք օլան Յիսուս Քրիստոսա տօղանմասը վէ եափըշմասը եօլուլլա օլուր, գիրա «Փէտէր քէնտի գաթընտա հայաթա մալիք օլտըղը միսիլու, Օղլա տախի պէօյլէճէ քէնտի գաթընտա հայաթա մալիք օլմաղը վէրմիշ տիր» (Յովհ. 5. 26), վէ Օղուլ՝ քէնտինէ իման իլէ եափըշան ճանա պու Իլահի հայաթը իլհագ էթմէք գուտրէթիւնէ մալիք տիր. (Յովհ. 17 2: Գաղ. 2. 20): Տօղուշըն ամէլի Բուհիլ Գուտս տըր. պու սէպէպտէն եէնիտէն տօղմագ՝ Բուհտան տօղմագ տըր (Յովհ. 3.

5, 6, 8). վէ Բուհտան տօղան՝ արթըզ սատէճէ թէնտէն տօղան հալլինտէ գալմայըպ. Բուհտանի վէ Իւահի թապիւթա հիսսէտար օլուր: Պէօյ-լէճէ էվլատ Ուլլահ օլմագլըզ սըրֆ պիր իսմ տէյիլ, պիր վագըա, հագիզի վէ էսասի պիր թէպտիւթա տըր: «Վէ պէօյլէիզ... շիմսի էվլատ Ուլլահ-իզ» տէյօր (1 Յովհ. 3. 1, 2): Էկէր Յիսուս Քրիստոս էգէլի Օղուլ օլմասա իտի, պիզ էվլատ Ուլլահ օլմագլ վէ Ալլահա «Ապպա փէտէր» չաղըրամագ իտիք: Օ պիզէ սալընտա քէնտինին հագըզ վէ մալը օլան պու գուտրէթ վէ սէլահիյէթի վիւրի, քի պիզ քէնտինէ պի-րա տէրլէր վէ միւրա շէրիքլէրի օլալըմ: Պու սուրէթլէ Յիսուս Քրիստոս, քի Իպնի վահիտ տիր, «Իլք տօղմուշ» (անդրանիկ) օլուր վէ չօլ պիրատէրլէր արասընտա իլք օլուր (Բօմ. 8. 29: Իպր. 1. 6):

Տիզգաթ էաէլիմ քի թովմաս՝ «Բապպըմ վէ Ալլահըմ տէյիլ իզրարընը Յիսուսըն անա քէնտի ալլինմիշ էլլէրինի վէ եանընը կէօ-թէրմէսինտէն սօնրա օլուր: Պու տախի փէք մանատար տըր: Թովմաս օ խաչանան, եինէ-տէզըլամ էտէն Զաթա «Բապպըմ վէ Ալլահըմ» տէմէյէ քէրէտտիւտ էթմէտի: Պու կիւն փէք չօլլար՝ սալթ Յիսուսըն խաչանմասընը պապա-րազ, Անա Իպնուլլահ իսմինի վէրմէյէ պիլէ թէրէտտիւտ էտիյօրլար: Հալպուքի խաչըն տի-պիւտէ պէքլէյէն Բօմալը եիւզպաշը՝ Յիսուսըն թէպլիմի բուհ էթտիյի տագիզէտէ «Հագիզաթէն պու տտէմ Իպնուլլահ իտի» տէյու շէհատէթ էթմէքտէն չէքինմէտի: Զիրա էկէր օ խաչտա էօլէն Զաթ՝ Ալլահըն Իպնի վահիտի տէյիլ իտի իսէ, անըն էօլիւմիլ՝ կիւնահա քէֆար էթ օլմագլ իտի, վէ պիզ պու կիւն աֆվլըզտան մահրում վէ կիւնահալար իչինտէ էօլմէյէ մահ-քիւմ օլուր իտիք: Օ խաչտա ազան զանըն քէ-րամէթ վէ գուզվէթի շունտա տըր քի, օրատա էլէմ չէքէն Յիսուստա Ալլահ տիւնեայը քէն-տիսիլէ պարըշտըրմը տըր (2 Կորն. 5. 19), Յիսուսըն տէօքտիւլիւ զան՝ սատէճէ պիր ինտան զանը տէյիլ, Ալլահըն զանը տըր (Ամալ. 20. 28). չիւնքի Յիսուս՝ էմմանուէլ, եանի «պիզիմէ օլան Ալլահ» տըր, վէ խէլա ս-քեա ր օլմասընըն, զափմընը կիւնահալարընտան խէլաս էաէպիլմէսինին սըրըն պունտա տըր (Մատթ. 1. 21-23): Էվվէթ, Օ ճէսէտէ տօղուշընա պապարագ պիր եէհուտի իտի, լաքին էգէլի տօ-ղուշը հատէպիլէ «ճիւմլէնին իւզէրինէ Օ իլլէլ-պէտ Ալլահը միւլարէք տիր» (Բօմ. 9. 5):

(Տէվամ)

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

(Շար. 4րդ. Թիւէն)

Հոգեւոր գործը Յրանաայի մէջ.

Ուրախ ենք ըսելու որ աղօթքներու լսող մեր Տէրը զարմանալի կերպով իր ցրուած հօտին օգնութեան փութացած է անակնկալ կողմիւ: Genève ի Société Evangelique քանցեալ տարի Մայիսին խօսք տուաւ մեզի մէջ հայ Սբ. զրա-ծախ ունենալ քաղաքիս մէջ, այսօր տարիէ մը ի վեր Սբ. զրածախ մը հօթէլէ հօթէլ, տունէ տուն կը պտտի Աստուծոյ խօսքը բերելու հայոց իրենց մայրենի բարբառով, նաեւ հոգեւոր պը-քեր:

Այս զրածախներու թիւը հիմա 3 ի հասած է Յրանաայի այլեւայլ կողմերը եւ կը յուսանք թէ կարճ ժամանակէն 6 ի պիտի հասնի:

Այս 3 տարուան մէջ մենք զանազան պա-րագաներու տակ պատեհութիւն ունեցած ենք հարաւային Ամերիկա ալ գրքեր զրկելու: Հոս տեղն է ըսել թէ այդ երկիրներուն մէջ զանուող մեր եղբայրները այդ ժամանակէն ի վեր մեր խորհրդածութեան նիւթ եղած են, ու ասոր արդիւնք ըլլալով՝ զրութեամբ եւ անձնական տեսակցութիւններով ջանացած ենք համոզել ամերիկեան Աստուածաշունչի ընկերութիւնը, որպէսզի Ամերիկայի զանազան երկիրներու մէջ զանուող իրենց մասնաճիւղերուն ուշադրութեան յանձնէ հոն զանուող հայերը, որպէսզի անոնք ալ Սբ. գրքի տէփօներ հաստատեն հայոց հա-մար, որպէսզի իւրաքանչիւր հայ կարող լինի իր զանուած տեղին մէջ իր մայրենի լեզուով Աստ-ուածաշունչ մը ձեռք ձգել:

Այս խնդրանքին ընթացք տրուած է եւ յետ այսու Պրագիլիոյ մէջ զանուած մեր եղբայրները հայերէն Սբ. գիրք կրնան զանել կամ ապսպրել հետեւեալ հասցեով.— Rev. H. C. Tucker D. D. Caixa do Correio 454, Rio de Janeiro,

Արճէնթինի մէջ զանուածներն ալ հետեւեալ հասցեով.— Rev. Paul Pengotti, Calle Para- na 481, Bouenos-Aires.

Մեր Պիլմէեան, Հրանդ Ապաճեան, Անթոյ-եան, Մատթէոս Վարդանեան եղբայրներուն կը թելադրենք շուտով յարաբերութեան մտնել իրենց շրջանակին վերաբերող անձնաւորութեան հետ: Թերեւս յաջողին ալ մէյմէկ գրածախներ ունենալ իրենց քաղաքներուն մէջ:

Տէրը իր գործը օրհնէ հայ ցրուած բեկորնե-րուն մէջ ամէն տեղ: Ասոր համար միշտ կ'աղօ-թենք:

Յ. Ն. Ղ.

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար. Ա. Երեցեան, 40, Րիւ տէ Տօմինքին - Մարտի